

գրեթէ վեց մատնաշափի եղած պիտի ըլլայ . պոչը հաստ ու երկայն է . կոճը կի ողնայարին ամէն մէկ կտորը գրեթէ երկերկութիղ հաստութիւն ունին . կողերուն ոսկորներն ալ անոնց պէս կարգէ գուրս ձեւ ու կազմուածք ունենալով, ուրիշ ամէն կենդանեաց ոսկորներէն ալ տարբեր կ'երևնան, ու անտարակոյս կենդանւոյն լողալու կ'օգնեն եղեր, որովհետեւ անոնց վարի կողմէրը թիակի ձեռվլայն են :

Ե՞ս ցուցանքաւոր կենդանւոյն կը-
մախքը անցած տարի մարտ ամսուն
մէջ գտեր է Ալպէրթ Քոխ անունով
գերմանացի բնագէտը հիւսիսային
Վմբիկա՝ Ալիացեալնահանգաց եր-
կիրը՝ Ալապամա գաւառին մէջ պըզ-
տիկ գաշտի մը վրայ Աինթապուք ը-
սուած գետին քովը : Դատած ատենը
օձին պառկուածքը կէս կլոր է եղեր,
գլուխն ալ կրային հողի մը մէջ խրած,
բայց բոլոր ոսկորները ամեռողջ պա-
հուած : Ենունը գրեր է Գ բանովէս
Հարլանէան՝, 'ի պատիւ Փիլադեղփիա
քաղքին Հարլան կամ Հարլէն վար-
ժապետին :

ԲՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Բաժդուկէ Հոռոտ :

Դրժուկը անգամ անգէտք էին
Անիծապարտ վառողիս,
Զոր բոց իսպանէ Արէս զուժգին
Ընդ երկաթոյն ձապաղիս :

ԼԵԳՐԻԾՆ

Գ.Ի.Տ.Տ. կան որ ուրախութիւն և զարմանք կը
բերեն մարդուս իրենց մեծամեծ օգուանելուն
համար . գիւտեր ալ կան որ օգուանին քիչ ու վե-
նասնին շատ կարծուելով զարմանք ու սոսկումն
կը պատճառեն, քան թէ հասարակաց ուրախու-
թիւն : Ասոնցմէ մէկն ալ աս տարի հնարուածն
է, այսինքն բամպակէ վառողին գիւտը : Զուի-
ցերի երկրին Պաղիէտ քաղաքը Ըէնապայն 2 ա-
նունով երևելի բնալոյն մը կայ որ աս տեսակ նոր
վառողը հնարեր է . բայց շնելուն գաղտնիքը գեռ

գուրս չէ հանած : Կոյն ատենները Պէօթկէր 1 ա-
նունով գերմանացին ալ ֆրանքֆորթ քաղաքին
մէջ շիներ է բամպակէ վառողը բոլորովին նման
Ըէնապայինի հնարածին : Օթթոյ անունով ուրիշ
գերմանացի մըն ալ Պրունավիք քաղաքը ոչ միայն
կրցեր է շինել նոյն բամպակէ վառողը, հապանակ
շինելու կերպը հրատարակեր է, որ աս է . հաս-
րակ բամպակին աղէկն ու մաքուրը առնելու է,
կ'ըսէ, ու կէս վայրկենի չափ ընկղմելու է ամենա-
բարկ բորակյին թթուի մէջ . ետքը շատ անգամ
լուալու է բամպակը ջրով, այնպէս որ ամեննին
վրան թթուին մասը չմնայ . ետքը շորցնելու է,
կըլայ բամպակէ վառող : Բայց ուրիշները կ'ըսէն
թէ աս կերպը նոր գիւտ մը չէ, հապա 1838ին
Պրացոնէ գաղղիացւոյն հնարածն է, որ ուրիշ ա-
նուանի բնալոյներ ալ փորձեր ու ստուգեր են :
Ուստի Ըէնապային ու Պէօթկէր գէմելեր են իրեն
ու ցցուցեր են թէ Օթթոյին շինածը իրենց շինա-
ծին նման չէ, անոր կատարելութիւներն ալ չունի :
Գերմանական գաշնակցութեան ատենը հա-
րիւր հազար ֆիորին խոստացեր է ան երկու քաջ
բնագէտներուն՝ թէ որ լաւ մը քննուի իրենց հնա-
րած վառողն ու ըսածնուն պէս հասարակ վառո-
գէն շատ աւելի կատարելութիւններ ունենայ :
Բամպակի վառողը խիստ գիւրավառ ըլլալէն
զատ՝ աս մասնաւոր յատկութիւններս ալ ունի որ
ա, Ամեննին հրազնուոց մէջ գիւտ կամ աղոտ չը-
գեր: թէ, Ըուս մը կը բոլորնիկ ու միակերպ : թէ, Դրե-
թէ ամեննին ծուփս չհաներ . աս կատարելութիւ-
նը խիստ հարկաւոր բան է, մանաւանդ պատե-
րազմի ատեն: թէ, Որովհետեւ ուրիշ կերպով չը բոլո-
նիր՝ բայց եթէ կայծ ձգելով վրան, և կամ սաս-
տիկ ուժով մը վրան զարնելով, ուստի տեղէ տեղ
տանիլը վտանգաւոր բան չէ . առանց բոց հանե-
լու այրելուն համար ալ կրակի այսինքն հրկիզու-
թեան պատճառ չը լլար : թէ, Թէպէտ հասարակ
վառողէն աւելի տեղ կը բռնէ, բայց ծանրութեա-
նը կողմանէ անկէ շատ թեթէ է: թէ, Թրջութէն
ետքը թէ որ ըրցընես, առջնին պէս գիւրավառ
կըլայ . իսկ քիչ մը իսոնաւ եղած ատենը ուժը
աւելի ալ կ'ըլլայ :

Աս նոր վառողը գրառուանց հասարակ բամպա-
կէն գրեթէ ամեննին տարբերութիւն չունի . գոր-
ծածելու համար ալ կաոր մը անկէ կ'առնեն՝ հա-
սարակ վառողի պէս հրացանին մէջը կը հրեն, վե-
րան ալ կապարէ գնաակ լեցընելէն ետքը՝ թղթէ
խից մը կը կոփեն, ու հրահանքը զարնելով կը
պարպէն հրացանը: Փորձեր են որ միայն 13 ցո-
րենի ծանրութեան բամպակէ վառողով ատրճա-
նակ մը լեցուցեր են ու նետեր են . գնտավլ 75
քայլ հետու տեղ վեց հատ հաստ տախտակ ծա-
կեր անցեր է: Հետղհետէ անդադար փորձերով
աւելի հաստատուելու վրայ են աս սոսկալի գիւ-
տին կատարելութիւնները . բայց ինչպէս որ առաջ-
ըսնէ, հիմակուղնէ սկսան Եւրոպայի օրագիրնե-
րը աս բամպակէ վառողին պատճառած մեծամեծ
վիաններն ալ պատմել, որ մէնք զանց կ'ընենք հո-
յիշել:

1. Böhmer.

1. Hydorchos Harlani.

2. Scönbein.